ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

XI[2] դասարան

Դասղեկ՝ Նաիրա Երկանյան

2023-2024 ուստարի

Դասարանի ընդհանուր բնությագիր		
XI² դասարանը բաղկացած է 17 աշակերտից՝ 10 աղջիկ, 6 տղա: Ձևավորված է համախմբված կոլեկտիվ: Սովորողները կարգապահ են, դրսևորում են աշակերտական վարք, առաջադիմությունը լավ է: Դասարանը համախմբված է և ակտիվ: Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում՝ Ստեղծել դասարանական անկյուն՝ դասացուցակ, հերթապահության ցուցակ,դրոշ,զինանշան,օրիներգ: ՈՒսուցիչ-աշակերտ,դպրոց-ընտանիք սերտ կապի ստեղծում: Աշխատանք աշակերտների դասարանի կարգապահության, մաքրության,,ավագի ընտրության, սանիտարահիգենիկ վիճակի պահպանում:		
N	**Կատարվելիք աշխատանքներ**	**Ժամանակ**
	Կազմակերպչական աշխատանքներ	
1	Նախապատրաստել և կահավորել դասասենյակը:	Օգոստոս
2	Կազմել սովորողների ցուցակը, վերստուգել դասարանի սոցիալական անձնագիրը,լրացրել նոր աշակերտներինը:	Սեպտեմբեր
3	Կազմել ուսումնական հաստատության դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան ծրագիր և այն արտացոլել համապատասխան մատյանում /ՈՒսումնական հաստատության դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան ծրագիր/:	Սեպտեմբեր
4	Ստանալ և բաշխել դասագրքերը:	Օգոստոս
5	Հավաքել տեղեկություններ՝ լրացուցիչ կրթության հաստատություններում դասարանի աշակերտների մասնակցության, արտադասարանական խմբակներ հաճախողների մասին:	Սեպտեմբեր
6	Դասագրքերի հանձնում	Հունիս
7	Դասղեկի կրթադաստիարակչական աշխատանքի արդյունքների ամփոփում, հաշվետվության կազմում	Հունիս
	Աշխատանք սովորողների հետ	
8	Պարբերաբար անցկացնել դասղեկի ժամեր՝ շաբաթը մեկ անգամ: Թեմաներն արտացոլել համապատասխան մատյանում՝ ՈՒսումնական հաստատության դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան ծրագիր:	Ուստարվա ընթացքում

9	Դասարանական կոլեկտիվի փոխհարաբերությունների՝(փոխհարաբերություններ աշակերտների միջև, աշակերտների և ուսուցիչների միջև, ներդասարանական, միջդասարանական փոխհարաբերություններ) վերլուծություն, համակարգում, կարգավորում:	Ուստարվա ընթացքում
10	Իրականացնել դասարանի համար սահմանված գործավարություն, էլեկտրոնային գրանցումները, դպրոցի տնօրինությանը ներկայացնել սովորողների հաճախումների, առաջադիմության և վարքի մասին տեղեկատվություն:	Ուստարվա ընթացքում
11	Կազմակերպել սովորողների առաջադիմության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, էքսկուրսիաներ:	Ուստարվա ընթացքում
12	Ծանոթացնել սովորողներին դպրոցի ներքին կարգապահական կանոներին և հետևել դրանց ապահովմանը: Ծանոթացնել դպրոցի տարհանման պլանին:	Սեպտեմբեր
13	Աջակցություն ցուցաբերել ուսումնառության մեջ դժվարություններ ունեցող սովորողներին, մասնակցել դասարանի սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դիտարկմանը, բացահայտմանը, մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը:	Ուստարվա ընթացքում
14	Օգնություն ցույց տալ՝ դասարանական և դպրոցական ինքնավարության օղակների, տվյալ դասարանի ներկայացուցիչների աշխատանքների կազմակերպմանը:	Ուստարվա ընթացքում
15	Դասարանական խորհրդի ընտրություններ, աջակցություն դպրոցի աշխորհրդին:	Ուստարվա ընթացքում
	Աշխատանք դասավանդող ուսուցիչների հետ	
16	Կատարել առարկայական դասալսումներ, համագործակցել դասավանդող ուսուցիչների հետ, համատեղ կազմակերպել միջոցառումներ, էքսկուրսիաներ, դասեր:	Ուստարվա ընթացքում
17	Համագործակցել ԲՄԹ մասնագետների հետ, ՄԿԱ փոխտնօրենի և ԴԱԿ-ի հետ:	Ուստարվա ընթացքում
	Աշխատանք ծնողների հետ	

18	Պարբերաբար հրավիրել ծնողական ժողովներ, ստեղծել ծնողխորհուրդ, քննարկել աշակերտների առաջադիմությունը, դասարանին հուզող հարցերը՝ պահովելով է դպոց- ծնող- աշակերտ կապը:	Ուստարվա ընթացքում
19	Սեմինար- խորհրդատվություններ. • Դեռահասային տարիքի ճգնաժամեր • Բուլլինգ. կանխարգելման միջոցառումներ • Սովորողների իրավունքներ	 Նոյեմբեր Հունվար

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքային և ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական դաստիարակությունը անձնավորության համակողմանի և ներդաշնակզարգացման կարևոր բաղադրիչ է: Ֆիզիկական դաստիարակության նպատակն էժամանակին ձևավորել երեխաների շարժողական կարողություններն ու հմտությունները,զարգացնել հետաքրքրություն՝ երեխային մատչելի շարժողական գործունեության նկատմամբ:Ձևավորել սեփական ֆիզիկական հնարավորություններին համապատասխան շարժողական ընդունակությունները զարգացնելու կարողություն, ինքնախնամքի, հիգիենայի հմտություններ, վնասակար սովորույթների հանդեպ բացասական վերաբերմունք, քաղաքացիական պաշտպանության և առաջին օգնության հիմունքներին տիրապետելու, արտակարգ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու հմտություն: Հարգանքի ձևավորում սեփական և այլոց աշխատանքի նկատմամբ: Իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողությունների ձևավորում:

20	Սահմանել ամենօրյա հերթապահություն, հետևել դասարանի և շրջապատի մաքրությանը:	Ողջ տարվա ընթացքում
21	Մասնակցել համաքաղաքային և դպրոցական շաբաթօրյակների, սպորտլանդիաների	
22	Սեմինարներ առաջին օգնության հիմունքներին տիրապետելու նպատակով դպրոցի բուժքրոջ մասնակցությամբ	Ամսվա մեջ մեկ անգամ
23	Հանդիպում տարբեր մասնագիտություն ունեցող ծնողների հետ	Ամիսը մեկ անգամ
24	Մասնագիտական կողմնորոշման ուղղված հանդիպումներ, էքսկուրսիաներ. Էքսկուրսիա ԵՊՀ և այլ բուհեր	 Սեպտեմբեր Նոյեմբեր

Ռազմահայրենասիրական և հոգևոր դաստիարակություն

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը և գրագետ, հոգեպես ու ֆիզիկապես կոփված, բանակի մասին տեղեկացված ու պատրաստված սերունդ դաստիարակելու

գործընթացը օրեցօր պետք է դառնա հրատապ:Ճանաչողության միջոցով ձևավորել սեր հայրենիքի նկատմամբ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթությունները գիտակցող անձ, ով կարևորում է սեփական քաղաքացիական պարտքը: Ձևավորել սեփական մշակույթը, ազգային ավանդույթները, բարոյական արժեքները գնահատելու, քրիստոնեական արժեքներին հակասող երևույթներին դիմակայելու կարողություն:

25	Հանդիպում և զրույց քահանայի հետ	Նոյեմբեր
26	Էքսկուրսիա՝ Առաջին Հանրապետության թանգարան	Հոկտեմբեր
27	Էքսկուրսիրա՝ ֆիդայական շարժման «Զորավար Անդրանիկ» թանգարան	Հունվար
28	Էքսկուրսիա՝ Հայաստանի պատմության թանգարան	Մարտ
29	Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից կազմակերպված կրթական դասախոսությունների մասնակցություն	Ապրիլ
30	Էքսկուրսիա՝ Սարդարապատի հուշահամալիր և թանգարան	Մայիս

Բարոյական և գեղագիտական դաստիարակություն

Բարոյական դաստիարակության հիմնական էությունը անձի բարոյական դաստիարակությունն ու բարոյական զարգացումն է:Ուշինսկին դաստիարակությունը բնորոշում է որպես ներդաշնակորեն զարգացած անձնավորության ձևավորմանը նպատակաուղղված գիտակցական պրոցես:Ուստի նահրաժեշտ է ձևավորել մշակութային ընկալման և արժևորման կարողություններ, իր ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը գնահատելու, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ գիտակցելու հմտություն:

31	Էքսկուրսիա Ազգային պատկերասրահ	Փետրվար
32	Էքսկուրսիա՝ Փարաջանովի տուն-թանգարան	Նոյեմբեր
33	«Սպարտակ» բալետի դիտում Օպերայի և բալետի ազգային թատրոնում	
34	«Անուշ» օպերայի դիտում	

Գիտաճանաչողական և բնապահպանական դաստիարակություն

Էկոլոգիական դաստիարակությունը էկոլոգիական կուլտուրայի հիմքն ու անբաժանելի մասն է, շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտակցական վերաբերմունքի մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված անընդմեջ, համակարգված գործընթաց, որը հնարավորություն է տալիս քաղաքացիներին ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ, ձևավորել հմտություններ և բացահայտել ունակություններ, դրսևորել բարոյական չափանիշներ և վարքագիծ՝ բնության հետ փոխներգործության ընթացքում:Ուստի անհրաժեշտ է ձևավորել բնության և հասարակության փոխազդեցությունները ճանաչելու, ինչպես նաև կայուն զարգացման ու շրջակա միջավայրի պահպանության գործում սեփական դերն ու պատասխանատվությունը գիտակցելու հմտություն:

35	Էքսկուրսիա բնության թանգարան	Սեպտեմբեր
36	Մասնակցել բնապահպանական միջոցառումներին, կազմակերպել միջոցառումներ՝ նվիրված Ջրի համաշխարհային օրվան, Անտառների պահպանության օրվան, Երկրի օր և այլն:	Մարտ- ապրիլ
37	Էքսպո-ցուցահանդեսների մասնակցություն	
Թվային և մեդիա դաստիարակություն Ձևավորել մեդիագրագիտության կանոններին հետևելու հմտություն, տեղեկատվության հոսքերում կողմնորշվելու, տեղեկությունները քննադատորեն վերլուծելու կարողություն: Թվային մեդիայի օգտագործման հնարավորությունների կողքին նաև դրանց հետ կապված ռիսկերը գիտակցելու, իրենց վարքը թվային աշխարհում գնահատելու և վերափոխելու կարողություն՝ անվտանգության, պատասխանատվության և էթիկայի տեսանկյունից:		
36	Հանդիպում ‹‹Ինտերնետ հանրություն» և ‹‹Ինտերնետ հասարակության Հայաստան հատված» ՀԿ-ների անդամների հետ	
37	«Ապահով համացանց» թեմայով սեմինարներ, պաստառների ստեղծում	Փետրվար

Դասղեկի դաստիարակչական աշխատանքների

Թեմատիկ պլան

N	Ամիս	Թեմա
1	09.2022	Գիտելիքի օր: Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում, նոր ուստարվա անելիքների ծրագրում, առաջարկությունների արկղիկի պատրաստում:
2		Ներդպրոցական վարքականոնի համատեղ մշակում
3		Անկախ Հայաստանի քաղաքացին եմ: Հայրենիք, ազգ, մայրենի լեզու: Ինչքանո՞վ ենք յուրաքանչյուրս պատրաստ պահպանելու մեր ազգային որակները:
4		Անկախության անգնահատելի դերն ինձ համար:
5	10.2022	Անկեղծ ու ազնիվ հարաբերություններ մեր դասարանում
6		Սովորողի իրավունքներն ու պարտականությունները
7		Հռոմից հին մայրաքաղաքը

8	11.2022	Անդրադարձ Արցախյան պատերազմին
9		Հանդուրժողականություն և անհանդուժողականություն
10		Հայաստանի հուշարձաններ: Ո՞ւր կուզենայի գնալ հաջորդ ուսումնական էքսկուրսիայի ժամանակ:
11		Բուլլինգի կանխարգելում
12	12.2022	Ով է իմ ընկերը
13		Ինչպես պաշտպանվել երկրաշարժից
14		Մասնագիտական կողմնորոշում
15		Ամանորյա ջերմ մաղթանքներ և բացիկներ: Դասարանի ձևավորում:
16	01.2023	Հայրենի՛ք,ես զարկն եմ քո բազկի:
17		Բարոյական արժեքներ, որ իմաստավորում են մեր կյանքը:
18		Հոգու կրթություն և մտքի թռիչք:
19	02.2023	Սուրբ Սարգս, թե Ս. Վալենտին
20		Մայրենիի միջազգային օր
21		Բարի գործերի և բարության մասին
22		Մեդիագրագիտության կանոններ
23	03.2023	Նշանավոր հայուհիններ
24		Երջանկության միջազգային օր: Երջանկության գաղտնիքը
25		Իմ երազանքները և նպատակները
26	04.2023	Նշանավոր հայուհիններ
27		Սուրբ Հարության տոնի խորհուրդը
28		Մայր Երկրի միջազգային օր
29		Այցելություն Ցեղասպանության թանգարան
30	05.2023	Մայիսյան եռատոն
31		Ընտանիքի դերը: Ընտանիքի միջազգային օր
32		Մայիսյան հերոսամարտեր:Հաղթանակների ամիս:
33		Բարոյական արժեքներ, որ իմաստավորում են մեր կյանքը:
34		Կիսամյակի ամփոփում

Դասարանի մասնակցությունը համադպրոցական,տարածքային և մարզային միջոցառումներին

Անցկացման ժամկետը	Միջոցառման անվանումը	Անցկացման տեղը
01.09 22.09 07.12 27.01 14.02 08.05	Գիտելիքի օր Անկախության օր Հիշատակիօր(երկրաշարժ) Հայոց բանակ Տյառնընդառաջ Մեր հաղթանակները	դպրոց դպրոց դպրոց դպրոց դպրոց դպրոց

Դասարանի ծնողական ժողովներ

2023-2024ուստարի

Անցկացման օր, ամիս,տարեթիվ	Օրակարգ	Ծանոթություն
Սեպտեմբեր Մարտ	1.Դասրանի աշակերտների առաջադիմության վերլուծություն 2.Դասարանում տիրող սոցիալհոգեբանական մթնոլորտի ներկայացում 3.Հոգեբանամանկավարժական խորհրդատվություն 4.Կազմակերպչական աշխատանքների քննարկում 5.Անհատական զրույց ծնողների հետ 6.Կարգապահական հարցեր	
Դեկտեմբեր Մայիս	1.Քննարկել նախորդ ժովովի որոշումները 2.Ճշտել ծնողների կարծիքը ժողովի մասին 3.Նախապատրաստել հարցաթերթիկներ ծնողների գնահատականների, առաջարկությունների, հարցերի վերաբերյալ: 4.Ծնողական ժողովի արդյունքների մասին տեղեկացնել տնօրինությանը: 5.Կիսամյակի ամփոփում 6.Անհատական աշխատանք ծնողների հետ	

Դասղեկ՝ _____ Ն. Երկանյան